Նորմօքսիայի պայմաններում առաջին խմբի կենդանիների կեղևի տեսողական գոտուց գրանցվել է 43 (100%) նեյրոնի, իսկ շարժողական գոտուց 36 (100%) նեյրոնի էլեկտրական ակտիվություն: Թթվածնաքաղցի առաջին փուլում նշված նեյրոններից ակտիվությունը պահպանել են համապատասխանաբար 33 (76,7%)^{-ը} և 28 (77,8%)^{-ը}: Թթվածնաքաղցի ծանր փուլում PO_2 -ի խիստ անկումը հանգեցրել է կեղևի նշված գոտիներից գրանցված նեյրոնների քանակի խիստ նվազման (համապատասխանաբար 51,1% և 52,8%): Կենդանիներին «իջեցնելուց» հետո տեղի է ունեցել էլակետային տվյալների մասնակի վերականգնում: Երկրորդ խմբում նույնպես գրանցվել են կեղևի համապատասխան գոտիների նեյրոնների իմպուլսային ակտիվությունը ինչպես նորմօքսիայում, այնպես էլ հիպօքսիայի ազդեցության դիսամփկայում: Փորձերը ցույց տվեցին, որ երեքնուկի ազդեցությամբ թթվածնաքաղցի և առաջին (4,5-5 հազ.մ), և երկրորդ (7,5-8 հազ.մ) փուլում ավելի մեծ քանակով նեյրոններ են պահպանում իրենց ակտիվությունը: Այսպես՝ թթվածնաքաղցի առաջին փուլում ակտիվությունը պահպանել են կեղևի շարժողական գոտու նեյրոնների 92,3 %^{-ը}, իսկ տեսողական գոտու 92,6 %^{-ը}: Թթվածնաքաղցի ծանր փուլում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 69,2% և 73,1%: «իջեցնելուց» հետո իրենց էլակետային ակտիվությունը ստուգիչ տվյալների համեմատ ավելի մեծ քանակով նեյրոններ են վերականգնել կենդանիների երկրորդ խմբում: Փոփոխությունների ողջ դիսամփկան ներկայացված է աղ. 1 -ում:

Բացի քանակական փոփոխություններից գրանցվել և վերլուծվել են նեյրոնների այլ ցուցանիշներ և՛ իմպուլսային համազարկի տևողությունը, համազարկում իմպուլսների քանակը և իմպուլսային ակտիվության միջին հաճախությունը:

Աղյուսակ 1. Երեքնուկի ազդեցությունը թթվածնաբաղցի պայմաններում գլխուղեղի կեղևի նեյրոնների վրա

Բարձրություն	Ստուգիչ տվյալներ		Նեյրոնների փոփոխությունը երեքնուկի օգտագործումից հետո	
	Բացարձակ քանակը	%	Բացարձակ քանակը	%
Տեսողական գոտի				
Նորմա	43	100	52	100
4,5-5հազ.մ	33	76,7	48	92,3
7,5-8հազ.մ	22	51,1	36	69,2
Իջեցում	34	79,1	49	94,2
Շարժողական գոտի				
Նորմա	36	100	41	100
4,5-5հազ.մ	28	77,8	38	92,6
7,5-8հազ.մ	19	52,8	30	73,1
Իջեցում	29	80,6	39	95,1

Աղյուսակ 2. Թթվածնաբաղցի պայմաններում գլխուղեղի կեղևի նեյրոնների իմպուլսային ակտիվության փոփոխությունը երեքնուկի ազդեցությամբ

Ցուցանիշներ	Ստուգիչ				Ցուցանիշների փոփոխությունը երեքնուկի օգտագործումից հետո			
	Նորմա	4.5-5 հազ.մ	7.5-8 հազ.մ	Իջեցում	Նորմա	4.5-5 հազ.մ	7.5-8 հազ.մ	Իջեցում
Տեսողական գոտի								
Համազարկի տևողությունը, վ	0,86	0,84	0,87	0,85	0,68	0,69	0,71	0,69
Իմպուլսների թիվը համազարկում	16	20	11	18	27	33	23	26
Իմպուլսների միջին հաճախականությունը, իմպ/վ	18,6	23,8	12,6	21,1	39,7	47,8	32,4	37,6
Շարժողական գոտի								
Համազարկի տևողությունը, վ	0,72	0,71	0,85	0,85	0,47	0,44	0,47	0,5
Իմպուլսների թիվը համազարկում	15	17	16	19	19	22	18	19
Իմպուլսների միջին հաճախականությունը, իմպ/վ	20,8	23,9	18,8	22,3	40,4	50	38,2	38

Ըստ ստուգիչ տվյալների՝ տեսողական գոտուց գրանցված նեյրոնների համազարկի տևողությունը եղել է 0,86 վ, իմպուլսների քանակը՝ 16, միջին հաճախությունը 18,6 իմպ/վ:

Երեքնուկի 10-օրյա օգտագործումից հետո այդ ցուցանիշները համապատասխանաբար եղել են 0,68 վ, 27, և 39,7 իմպ/վ: Ստուգիչ խմբի կենդանիների շարժողական գոտուց գրանցված նեյրոնների իմպուլսային ակտիվությունը կազմել է 20,8 իմպ/վ, իսկ երեքնուկի օգտագործումից հետո՝ 40,4 իմպ/վ:

Երկրորդ խմբի կենդանիների մոտ թթվածնաբաղցի ազդեցության դիսամիկայում նեյրոնների իմպուլսային բարձր ակտիվությունը պահպանվել է: Վերոհիշյալ ցուցանիշների փոփոխության դիսամիկան բերված է աղ. 2-ում:

Թթվածնաբաղցի առաջին փուլում, երբ ներշնչվող օդում PO_2 -ը կազմում է 95-85 մմ սս., իսկ արյան թթվածնային հագեցումը՝ 80-85 %, տեղի է ունենում կեղևի նեյրոնների իմպուլսային ակտիվության մեծացում, որը հիմնականում պայմանավորված է օրգանիզմի տարբեր ռեֆլեքսածին գոտիների բեմոռնակալիչներից դեպի կեղև գնացող ազդակների դրդող ազդեցությամբ: Թթվածնաբաղցի առաջին փուլում տեղի է ունենում Na^+ -ի հոսքի ուժեղացում դեպի նեյրոն, որն էլ, հավանաբար, նեյրոնի էլեկտրա-

գեներալի խանգարման մեխանիզմներից մեկն է [6, 10, 11]: Կեղևի նեյրոնների իմպուլսային ակտիվության մեծացումը կարող է լինել նաև այդ գործոնի ազդեցությամբ պայմանավորված բջջի թաղանթի ապաբևեռացման արդյունք:

Այսպիսով, հիպօքսիայի առաջին փուլում նեյրոնների էլեկտրական ակտիվությունը, որն արտահայտվում է միջիմպուլսային տարածության փոքրացմամբ, այսինքն իմպուլսների հաճախության մեծացմամբ, բջջաթաղանթի ապաբևեռացման արդյունք է: Գրական տվյալների համաձայն գոյություն ունի որոշակի կապ օրգանիզմի միջավայրում PO_2 -ի փոքրացման, նյարդային բջիջներում H^+ իոնների կուտակման, K^+ արտահոսքի ուժեղացման և բջջաթաղանթի ապաբևեռացման միջև [5]:

Հիպօքսիայի երկրորդ կամ ծանր փուլում PO_2 -ը կազմում է 64-56 մմ սա., իսկ արյան թթվածնային հագեցումը՝ 65-60%: Այս փուլում դիտվել է ուսումնասիրվող նեյրոնների իմպուլսային ակտիվության խիստ նվազում, որը բացատրվում է բջջաթաղանթի ապաբևեռացման հետագա խորացմամբ: Ապաբևեռացման ուժեղացումը հանգեցնում է թաղանթային պոտենցիալի արտահայտված նվազման, որի արդյունքում կարող է տեղի ունենալ նույնիսկ բջջային ակտիվության լրիվ ճնշում [11]: Ըստ երևույթին, այդ փոփոխությունները պայմանավորված են թաղանթի թափանցելիության և բջջային մետաբոլիզմի մեխանիզմների խանգարմամբ: Հիպօքսիայի խորացմամբ մեծանում է իոնային տեղաշարժը՝ Na^+ -ի անցումը բջջից ներս և K^+ -ի դուրս գալը բջջից դեպի արտաբջջային տարածություն:

Հիպօքսիայի երկրորդ փուլում նեյրոնների ակտիվության նվազումն ըստ որոշ հեղինակների կապված է ուղեղում ԳԱԿԹ-ի քանակի ավելացան հետ, որն ընտրողաբար ուժեղացնում է արգելակվող հետսինապսային պոտենցիալը՝ սահմանափակելով թթվածնի ծախսը [6, 7]: Հիպօքսիայի ազդեցությամբ տեղի է ունենում նաև բջջային ացիդոզի զարգացում, որն էլ նյարդային բջջում ախտաբանական գործընթացների զարգացման պատճառներից մեկն է [5, 11]:

Օրգանիզմում վերոհիշյալ զարգացումները կանխելու համար բժշկության մեջ կիրառվում են բնական և արհեստական հակահիպօքսիկ բուժամիջոցներ, այդ թվում նաև հակաօքսիդիչ ազդեցությամբ օժտված շատ բույսեր, մասնավորապես կարմիր երեքնուկը: Ժողովրդական բժշկության մեջ կարմիր երեքնուկը օգտագործվում է ջրային և սպիրտային թուրմերի ձևով [1]: Հայտնի է, որ երեքնուկի ծաղիկները պարունակում են ֆլավոնոիդներ, եթերայուղեր, B-խմբի, ինչպես նաև A, C, E վիտամիններ, կումարին, ալկալոիդներ, գլիկոզիդներ, ճարպային յուղեր, խեժ, սպիտակուցներ, ածխաջրեր, թիրոզին ամինաթթու, որով էլ պայմանավորված են նրա բուժական ազդեցությունը սիրտ-թոքային և մի շարք այլ հիվանդությունների ժամանակ [3, 8, 9]:

Պարզվել է, որ վիտամին E-ն օժտված է ոչ միայն հակաօքսիդիչ ազդեցությամբ, այլև կարգավորում է հյուսվածքային էներգիական փոխանակությունը: Գիտական հետազոտություններից պարզվել է, որ բջջաթաղանթները պարունակում են չհագեցած ճարպաթթուներ, որոնք անբարենպաստ ազդեցությունների պատճառով գերօքսիդացվում են [9]: Գերօքսիդները, կուտակվելով հյուսվածքներում և բջջաթաղանթներում, միանալով ջրի հետ, վեր են ածվում օքսիդների, որոնք էլ անջատում են ակտիվ O_2 : Վերջինս դառնում է նյութափոխանակության խանգարումների և թաղանթների վնասվածքների պատճառ: Հակաօքսիդիչային տեսության համաձայն վիտամին E-ն, միացնելով այդ O_2 -ը, կասեցնում է լիպիդների օքսիդացումը՝ հակազդելով գերօքսիդների թունավոր ազդեցությանը [4]:

Վիտամին C-ն (ասկորբինաթթու) ունի մազանոթները ամրացնող, արյունաստեղծումը խթանող, ինչպես նաև իոնացնող ճառագայթահարումից պաշտպանող հատկություն: Այն դրական դեր է կատարում օրգանիզմի իմունային ռեակցիաների ձևավորման ժամանակ, նպաստում է հակամարմինների առաջացմանը, բարձրացնում է արյան լեյկոցիտների ֆագոցիտային ակտիվությունը: Վիտամին C-ն ապահովում է նաև օրգանիզմի առավել բարձր կայունությունը թթվածնային անբավարարության նկատմամբ, որը պայմանավորված է օրգանիզմի օքսիդավերականգման ռեակցիաներում նրա մասնակցությամբ [9]:

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս ենթադրելու, որ նշված դեղաբույսի օգտագործման ժամանակ բարձրանում է կեղևային բջիջների դիմադրողականությունը թթվածնային անբավարարության նկատմամբ. եթե ստուգիչ խմբի կենդանիների մոտ նեյրոնների ակտիվությունը արգելակվում էր 6-6,5 հազ. մ «բարձրության» վրա, ապա փորձնական խմբի մոտ նրանք շարունակում էին ակտիվ մնալ նույնիսկ 7-8 հազ. մ «բարձրության» վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Շաիրյան Թ. Գ., Պաղթյան Ս.Լ.* «Հայաստանի ուսելի բույսերը», Երևան, «Լուսավի», էջ 128, 2007:
2. *Ագաճյանյան Ն.Ա. և ծր.* Проблемы адаптации и учение о здоровье. М., изд-во Росс. Унив. дружбы народов, ст. 283, 2006.
3. *Вальдман А.Р.* Витамин Е в питании сельскохозяйственных животных. Витамины. Киев, "Наука-Думка" вып. 8, 1975.
4. *Владимиров Ю.А., Арчаков А.Н.* Перекисное окисление липидов в биологических мембранах. М., Наука, с.15, 1972.
5. *Власова И. Г. , Агаճյանյան Ն.Ա.* Индивидуальная устойчивость к гипоксии организма и нервной клетки. Бюлл. экс. биол. и мед., 118, 11, с. 454-457, 1994
6. *Лукьянова Л.Д.* Митохондриальная дисфункция, типовой патологический процесс, молекулярный механизм гипоксии, Проблемы гипоксии: молекулярные, физиологические и медицинские объекты под ред. Л. Д. Лукьяновой и И. Б. Ушакова: М. Истоки, с. 8, 2004.
7. *Мальшиев А.Д., Лукьянова Л.Д., Крапивин С.В.* Действие гипоксии нарастающей тяжести на динамику ЭЭГ коры головного мозга крыс с различной резистентностью к острому дефициту кислорода. Бюлл. экс. биол. и мед., 122, 9, с.244, 1996.
8. *Пишкова О.В.* Действие β-каротина и витамина Е на оксигенотографию и биоэлектрическую активность нервных клеток. Мат.-лы 209 конф., посвящ. 80-летию со дня рождения проф. Држевецкой И.А. "Физиологические проблемы адаптации", Ставрополь, 2003
9. *Шаповалов М.Г., Пишкова О.В.* Адаптационные изменения сердечно-сосудистой системы человека под влиянием природных антиоксидантов. Росс. физиол. журн. Им. Сеченова, 90, 8, с. 14-18, 2004.
10. *Martin B., Otmar P., Idor E. et. all.* Intermittent hypoxia increases exercise tolerance in elderly men with and without coronary artery disease. International J. of Cardiology, 96, p. 247-254, 2004.
11. *Pizani A., Galabresi P., Bernardi G.* Hypoxia in striatal and cortical neurons: membrane potential and Ca²⁺ measurements. Neuroreport, 8, 5 p. 1143-1147, 1997.

Ստացվել է 25.07.2014



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(66), 2014

ԴԱՂՁԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲՈՒՅՍՈՒՄ ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ռ.Յ. ԵՂՈՅԱՆ

Վանաձորի Յոլի. Թումանյանի անվան պետամալսարան,
բուսաբանության և աշխարհագրության ամբիոն
www.vspi.am

Ուսումնասիրվել են Լոռու մարզում դաղձի բույսերը, որտեղ այն աճում է 490-ից մինչև 3196 մ ծովի մակերևույթից բարձրության վրա և օգտագործվում է բնակչության կողմից: Ուսումնասիրվել են դաղձի (*Mentha piperita* L.) հյութաշարժի սկիզբը, բույսերի բարձրությունը, բուսափուլերի անցման տևողությունը, ֆոտոսինթետիկ մակերեսի մեծությունը, վերգետնյա և ստորգետնյա զանգվածները, ինչպես նաև որոշ ծանր մետաղների (ՇՄ) պարունակությունը ծովի մակերևույթից տարբեր բարձրությունների վրա գտնվող աճելատեղերում: Պարզվել է՝ ծովի մակերևույթից ցածր բարձրության վրա հյութաշարժը սկսվում է շուտ, բույսերը ավելի արագ են աճում և բարձր են, առաջացնում են շատ, բայց մանր տերևներ, վերգետնյա զանգվածը համեմատաբար պակաս է ստորգետնյա զանգվածից, բուսափուլերի անցումը կատարվում է ավելի արագ: ՇՄ քանակը և որակը փոխվում է ըստ բույսերի աճելատեղի բարձրության, սակայն, մեր տվյալներով, օրինաչափություն չի արձանագրվել:

Էկոլոգիա – բուսափուլեր – վայրի օգտակար բույսեր – ծանր մետաղներ

Изучались растения мяты в марзе Лори, где она растет на высоте от 490 м до 3196 м над уровнем моря и интенсивно эксплуатируется местным населением. Изучались длительность фенофаз мяты (*Mentha piperita* L.), высота растений, число и величина листьев, фотосинтетическая площадь, соотношение надземной и подземной биомассы, а также содержание некоторых тяжелых металлов в разных местах обитания на разных высотах. Выяснилось, что в низких местностях мята растет быстрее, образуя длинные стебли, но с большим количеством мелких листьев. Надземная масса относительно меньше подземной. Период фенофаз происходит намного быстрее. Количество и качество тяжелых металлов меняется в зависимости от высоты местности, но эти данные не носят закономерного характера.

Экология – фенофазы – дикие полезные растения – тяжелые металлы

The research has been done in Lori region where the mint grows at the height of 490-3196 m above the sea levels and is unsparingly used by the residents of that area. A research has been done to find out the height of the plant, the duration of the transition of the plant phases, the size of the photosynthetic surface, the over ground and underground mass, as the content of some heavy metals in the growing spaces of different heights from the sea level. It has been found out that the plants which grow at a low height from the sea level grow quicker and are high, produce many, though small leaves, the over ground mass is less than compared with the underground mass, the transition of plant phases happens quicker. The quantity and the quality of hard metals charges according to the height of the growing space of the plants, though were identified no regularities.

Ecology – phenophase – wild useful plants – heavy metals

Աշխարհի բոլոր երկրներին, այդ թվում Հայաստանին, բոլոր ժամանակներում հետաքրքրել են վայրի օգտակար բույսերը ոչ միայն որպես բուսական ռեսուրս և սելեկցիոն արժեքավոր գենոֆոնդ, այլև որպես համեմունք, սնունդ, նաև դեղաբույս, բուսական ռեսուրսների լավագույն աղբյուր, որը մարդը շարունակում է վերցնել բնությունից պատրաստի վիճակում ու օգտագործել [1, 4, 6, 7, 11]: Մարդը շարունակելու է բնությունից վերցնել այն, ինչը դեռևս չի հասցրել մշակույթի մեջ մտցնել, ինչպես, օրինակ, վայրի ուտելի շատ բանջարեղեններ, համեմունքային բույսեր, դեղաբույսեր, որոնց կենսաբանական, էկոլոգիական ու պահպանման խնդիրների և շատ հարցերի առումով համեմատաբար գիտական քիչ ուսումնասիրություններ կան: Չի կարևորվում հատկապես մարդու կողմից դրանց օգտագործման անվտանգությունը և արդյունավետությունը ու պահպանումը: Հողերի ինտենսիվ օգտագործման, բնական լանդշաֆտների դեգրադացման, ցենոզների բնական կառուցվածքի խախտման, հողերի անապատացման և ինտենսիվ յուրացման, շենքերի շինարարության, ճանապարհների, արդյունաբերական նոր գործարանների կառուցման, դրանց հետ միասին մթերքների տեխնածին աղտոտման և անթրոպոգեն շատ գործոնների պատճառով կրճատվում են մարդու համար օգտակար շատ վայրի բույսերի տարածման արեալները և պակասում է դրանց քանակը [1, 6, 7]: Ապացուցված է, որ այսօր մեր մոլորակի գենետիկ որոշակի հարստությունը գտնվում է խիստ վտանգի տակ, որը կարող է անվերականգնելի վնասների բերել [1, 9]:

Ներկայումս պարենի և գյուղատնտեսության համաշխարհային կազմակերպությունները (FAO), գործելով ՄԱԿ-ի շրջանակներում, ուսումնասիրում են վայրի օգտակար բույսերի և ագրոցենոզի գենոֆոնդի պահպանման խնդիրներ, ինչը դասվում է ազգային հարստությունների խմբին [2, 4]: Բնությունից վերցված օգտակար բույսերը որպես գյուղատնտեսական հումքի ստացման ժամանակակից միջոց առավել կարևոր է, նպատակահարմար և արդյունավետ, հատկապես գյուղատնտեսության ոլորտում չօգտագործվող սակավահող և թեթև լանջեր հողատարածքներ ունեցող երկրների համար: Գյուղմթերքների առատության նպատակով կատարելագործելով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման բազմատարր տեխնոլոգիաները՝ անհրաժեշտություն է առաջանում կատարելագործել բուսական բնական օգտակար ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործումը: Վերջինս հնարավորություն կտա բնության կողմից կարգավորվող պայմաններում, առանց մարդու միջամտության և լրացուցիչ ծախսերի, բնությունից, որպես գյուղատնտեսական արտադրության նոր բնագավառ, վերցնել բուսական արժեքավոր հումք:

Հայաստանն ունի հարուստ բուսականություն, որտեղ հանդիպում են շուրջ 3400 անոթավոր բույսեր: Այն արդյունք է բազմատարր բնապատմական, հողակլիմայական պայմանների և լեռնաշխարհի առկայության: Բույսերի խայտաբղետությամբ և ֆլորիստական յուրահատկություններով Հայաստանը միշտ գրավել է բուսաբանների ուշադրությունը՝ սկսած դեռևս հունական, հռոմեական, ռուսական հին պատմիչներից [2, 5, 7]: Հայտնի է, որ բոլոր ժամանակներում մարդկության գերխնդիրը եղել և մնում է բնության և հասարակության ինչպիսի հարաբերությունների ստեղծումը, որի լուծումն անմիջականորեն կապված է երկրագնդի բնակչության թվաքանակի աճի, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի, մարդու առողջության, էկոլոգիապես մաքուր սննդով ապահովման ու մարդուն անվտանգ պահելու հետ [8, 11, 12]:

Ինչպես մշակաբույսերից, այնպես էլ վայրի օգտակար բույսերից էկոլոգիապես մաքուր սնունդ ստանալն ամենակարևոր խնդիրներից է, որտեղ անժխտելի է ծանր մետաղների (ՇՄ) հարցը [3, 6, 8, 10-12]: Բույսերի աղտոտվածությունն ընդհանրապես և աղտոտվածությունը ՇՄ մասնավորապես ուղղակի ձևով կապված է ջրի, մթնոլորտի, հատկապես հողի աղտոտվածության հետ: Առանձին օգտակարությամբ հանդերձ, իրենց վնասակարությամբ մեծ տեղ ունեն ՇՄ: Տեխնածին և անթրոպոգեն ՇՄ շարժը բնական պայմաններում կախված է հողի ջրա-ֆիզիկական, մեխանիկական բաղադրիչներից, ՇՄ ֆիզիկա-քիմիական հատկություններից, հողի կլանող կոմպլեքսից, տեխնիկական և ագրոքիմիական ցուցանիշներից, ընդհանուր աղտոտվածության աստիճանից: Գիտական գրականության մեջ առկա են ՇՄ աղտոտվածության, վնասակարության և էկոլոգիապես մաքուր սննդում դրանց քանակական և որակական ուսումնասիրությունների վերաբերյալ բազմաթիվ տվյալներ [9, 10, 11, 12]: Սակայն նման ուսումնասիրություններ գրեթե բացակայում են դաղձի վերաբերյալ: Բույսերը համարվում են հողի, ջրի, մթնոլորտի՝ ընդհանրապես շրջակա միջավայրի աղտոտվածության գնահատման լավագույն ինդիկատորներ, կենսացուցանիշներ, կենսաօղակներ:

ԾՄ աղտոտված միջավայրում դրա բաղադրիչներում կարող են առաջանալ ֆիզիոլոգիական և ձևաբանական նկատելի բացասական փոփոխություններ: Դրա հետ միասին փաստ է, որ բույսերի նորմալ կենսագործունեությունն անհնարին է առանց միկրոտարրերի, որոնց հիմնական մասը ԾՄ են, բայց այդ տարրերի քանակությունը բույսերում հաշվվում են տոկոսի հարյուրերորդական-հազարերորդական չափերով: ԾՄ մասնակցում են բույսում տեղի ունեցող օքսիդավերականգնման գործընթացներին, ածխաջրերի, ազոտային տարրեր միացությունների, վիտամինների, բուսահորմոնների փոխանակությանը: Դրանք ինչ-որ չափով բարձրացնում են բույսերի դիմացկունությունը արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ և հանգեցնում դրանց հանդեպ իմունիտետի դրսևորմանը: Միկրոտարրերը նպաստում են նաև բույսերի ֆոտոսինթեզի, տրանսպիրացիայի արդյունավետության բարձրացմանը: Այդ տարրերը նուկլեինաթթուների հետ կազմում են կոմպլեքս միացություններ, ազդում բջջի ցիտոպլազմայի առանձին օրգանոիդների կառուցվածքի ֆիզիկական հատկությունների, ֆիզիոլոգիական ֆունկցիաների վրա [7, 10, 12]:

Բույսերի մեջ դրանց քանակի ավելացումը պայմանավորված է հանքարդյունաբերության, ծանր մետալուրգիայի, մեքենաշինության, գալվանական արտադրության, ցեմենտի, կաշվի արտադրության, թեթև արդյունաբերության և սննդի արտադրության թափոններով, ոռոգվող ջրերով, մթնոլորտից և այլն: ԾՄ բույսից սննդային շղթայով թափանցում են մարդու օրգանիզմ, աղտոտելով այն՝ առաջացնում են տարբեր տիպի հիվանդություններ: Մարդու առողջության համար առավել վնասակար են նաև այն առումով, որ ազդում են մարդու գենետիկական ապարատի (գենոմի) վրա, առաջացնում ժառանգական հիվանդություններ, որոնք փոխանցվում են սերունդներին, գնալով մեծանում է ԾՄ վտանգը: Ներկայումս ամբողջությամբ չեն ճշտված առանձին ԾՄ վնասակարության չափաբաժինները վայրի օգտակար բոլոր բույսերում: Վայրի համեմունքային, սննդային և շատ դեղաբույսերում ԾՄ վերաբերյալ տվյալները նույնիսկ բացակայում են: Հայաստանի ուռուցքաբանության կենտրոնի ուսումնասիրության տվյալներով քաղցկեղը ինչպես հիվանդների թվով, այնպես էլ մահացությամբ ամենաբարձրը Լոռու մարզում է: Ենթադրում ենք, որ այստեղ որոշ դեր կարող են խաղալ ԾՄ, որոնք կարող են մարդու օրգանիզմ թափանցել նաև դաղձից: Հասկանալի է, որ տեխնաձին աղտոտվածության առումով Լոռու մարզում Էկոլոգիական գնահատմամբ կարևորվում է գունավոր մետաղների առկայությունը՝ նախկինում Վանաձորի քիմիական գործարանը (այն այսօր կարող է ունենալ հետազոտություն), Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատը, դրա կյրումի մասնաճյուղը, Թեղուտը և այլն:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրությունները կատարվել են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում, որտեղ դաղձը աճում է ծովի մակերեվույթից 490 (Դեբեդի կիրճի Զարկուպի համայնք) մինչև 3196 (Ալքասարի գագաթ, Տաշիր) մետր բարձրությունների վրա: Ուսումնասիրության նյութ ընտրել ենք դաղձը, որը ինչպես Հայաստանի, այնպես էլ մարզի բնակչության կողմից ընդունված և ամենաշատ օգտագործվող վայրի համեմունքներից է, որը ամբողջ տարվա ընթացքում վաճառվում է շուկաներում: Այն օգտագործվում է շատ հին ժամանակներից:

Դաղձը (անանուխ) պատկանում է շրթնածաղկավորների (խուլեդիլնջազգիներ) *Lamiaceae* ընտանիքի *Mentha L.* ցեղին: Ցողունը ուղիղ, ստորին հատվածի միջին մասում սպիտակավուն մազիկներով է, վերին մասում սպիտակաթաղիք է, 40-100սմ բարձրությամբ: Տերևները երկարավուն են կամ էլիպսա-նշտարած, սղոցաեզր, նստադիր, ստորին մասից սպիտակաթաղիք, վերևից՝ կանաչ, երբեմն մազոտ: Ծաղիկը ծաղկաբույլ է, բարդ հասկի տեսքով, հաճախ հուրանման: Ունի ծաղկակիցներ, որոնք գծային կամ նշտարած են: Պսակը՝ կանոնավոր, թույլ երկշուրթ, քառաբլթակ, կարմրակապույտ կամ վարդագույն մազոտ, ծաղկակիցները մանր բզաձև: Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս է: Աճում է ամենուրեք հիմնականում ստորին լեռնային գոտում՝ առուների եզրերին, խոնավ տեղերում:

Դաղձում ԾՄ քանակական և որակական դիսմիկան պարզելու նպատակով լաբորատոր ուսումնասիրությունների համար նմուշները վերցրել ենք Լոռու մարզի տարբեր համայնքներից: Նմուշառումները կատարել ենք բույսերի ծաղկման շրջանում: Թաց բույսերը տեղափոխել ենք ծածկի տակ՝ ստվերում՝ միջանցիկ բամու տակ և չորացրել: Որոշակի չորացումից հետո տեղափոխել ենք լաբորատորիա և բերել օդաչոր վիճակի, ապա աղացով մանրացրել: Աշխատել ենք բոլոր նմուշներից պատրաստել հավասար մեծությամբ զանգված և վերցրել միջին նմուշ: Այդ զանգվածները տեղավորել ենք ապակյա կամ պլաստմասե տարաներում:

ԾՄ որոշել ենք ՀՀ բնապահպանության նախարարության մոնիթորինգի Երևանի կենտրոնական լաբորատորիայում՝ undic-ion cuploidae plasmooass-spectrometr անալիզի մեթոդով: Վեգետացիայի ընթացքում ըստ ածելատեղերի չափել ենք բույսերի բարձրությունը, տերևների մեծությունը, գրանցել ծաղկման սկիզբը և լրիվ ծաղկումը, հաշվառել կանաչ զանգվածի և արմատային համակարգի մասսան:

Տերևների մակերեսը որոշել ենք տերևների թղթային հետազոծի մեթոդով: 20 բույսի միջինացված տվյալները բերված են աղ. 1-ում:

Արդյունքներ և քննարկում: Ըստ աղ.1-ի տվյալների երևում է, որ Ալավերդու պայմաններում բույսում հյուսվածքները սկսվում է շուտ, բույսերը ավելի արագ են աճում, և ցողունները բարձր են:

Աղյուսակ 1. Դաղձի բուսափուլերի անցման տևողությունը Էկոլոգիական տարբեր պայմաններում, օր (2011-2013 թթ. միջինացված տվյալներ)

N	Աճելատեղ		Բույսերի աճման /հյուսվածք/ սկիզբ, ամիս և ամսաթիվ	Բույսերի բարձրություն,սմ	Բույսերի ծաղկման տևողություն օրերով		Մեկ բույսի տերևների		Մեկ բույսի զանգվածը, գր	
	Համայնք	Ծովի մակերևույթից բարձրություն, մ			Սկիզբ, 10-15%	Լրիվ ծաղկում, 70-75%	Թիվ, հատ	Մակերեսը, սմ ²	Վերագետնային զանգված	Արմատների զանգվածը
1	Ալավերդի	770	28.03±11	52±2.1	113±6	130±7	10±1.4	64±4.2	122±1.8	70±0.8
2	Փամբակ	1280	06.04±12	48±2.4	117±7	134±5	8±1.9	60±3.2	126±1.3	68±1.3
3	Մարգահովիտ	1800	13.04±8	47±3.2	120±8	140±7	7±1.6	58±2.1	130±1.8	67±1.8
4	Մայմեխ	2400	22.04±9	46±2.2	125±8	150±8	8±1.7	58±1.6	132±1.7	63±1.4

Բույսի վրա առաջանում են մեծ քանակությամբ մանր տերևներ, բուսափուլերի անցումը կատարվում է արագ: Արմատային զանգվածը համեմատաբար պակաս է վերագետնային զանգվածից: Բույսերի աճելատեղի ծովի մակերևույթից բարձրության ավելացման հետ՝ տերևների թիվը պակասում է, սակայն առաջանում են խոշոր տերևներ: Տարբեր է նաև բույսերի սաղարթի և արմատային զանգվածների մասսան՝ ավելանում է սաղարթի մասսան: Բոլոր փոփոխությունները պայմանավորված են հողի և մթնոլորտի ջերմության ու խոնավության փոփոխմամբ՝ աճելատեղի Էկոլոգիական բաղադրիչներով: Ծովի մակերևույթից ցածր բարձրության վրա ջերմաստիճանը հողում և օդում բարձր է, իսկ խոնավությունը՝ պակաս: Հողը հումուսով համեմատաբար աղքատ է: Ուսումնասիրել ենք դաղձում որոշ ԾՄ քննակական և որակական տվյալները տարբեր աճելատեղերում՝ Ալավերդի, Փամբակ, Մարգահովիտ (աղ. 2): Ստացված արդյունքների անալիզը ցույց է տալիս, որ Ալավերդու պայմաններում դաղձում ամենից շատը երկաթն է՝ 54.0 մգ/կգ, ապա Zn՝ 52.4, վերջին տեղում է Co: Փամբակում՝ ամենից շատ Zn է, քիչ՝ Mo և Co, Մարգահովիտում նորից շատ է Zn (78 մգ/կգ), ամենից պակաս ցուցանիշը նկատվել է՝ Mo (0.77 մգ/կգ): Ըստ աճելատեղերի՝ ԾՄ քննակական պարունակությունը փոփոխվում է, որը նաև ԾՄ որակի դրսևորման ցուցանիշ է: Բոլոր աճելատեղերում ծանր մետաղներից շատ են Zn, Fe, Cu, համեմատաբար քիչ՝ Co և Cd:

Աղյուսակ 2. ԾՄ առավելագույն քանակությունը դաղձում Էկոլոգիական տարբեր պայմաններում, մգ/կգ, 2012-2013 թթ.

N	Աճելատեղ		Ծանր մետաղներ							
	Համայնք	Ծովի մակերևույթից բարձրությունը, մ	Zn	Fe	Cu	Ni	Pb	Mo	Cd	Co
1	Ալավերդի	800	52.4	54.0	21.7	4.9	2.46	2.1	1.7	0.8
2	Փամբակ	1300	73.5	52.1	20.2	8.2	8.3	2.1	2.2	1.1
3	Մարգահովիտ	1800	78.0	47.8	20.8	3.9	14.2	0.77	4.1	4.0

Այսպիսով, ԾՄ քննակը և որակը փոփոխվում են ըստ բույսերի աճելավայրի, որը պայմանավորված է ապարների հողմնահարման և հողառաջացման բաղադրիչներով և մայր ապարով, որի վրա առաջացրել է հողը, հողից բույսում ԾՄ թափանցելու գաղթի գործոններով:

Ուսումնասիրությունների արդյունքում եկել ենք հետևյալին: Տարբեր էկոլոգիական պայմաններում փոխվում են դաղձի բույսերում հյուսթաշարժի սկիզբը, բուսափուլերի անցման տևողությունը, տերևների քանակը և մեծությունը, վերգետնյա և ստորգետնյա զանգվածը, բուսափուլերի անցման տևողությունը, ընդ որում՝ ցածր բարձրության վրա բույսերը առաջացնում են բարձր ցողուն, շատ տերևներ, բայց փոքր չափսերով, արմատային սիստեմի զանգվածը համեմատաբար գերազանցում է սաղարթի զանգվածին, բուսափուլերը արագ են անցնում: Ըստ ածելատեղերի փոխվում է ՆՄ քանակը և որակը, սակայն բոլոր ածելատեղերում դաղձի բույսում շատ են Zn, Fe, Cu և Pb, քիչ՝ Co և Cd:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղոյան Ռ.Յ., Բայրամյան Լ.Ե., Վարդանյան Չ.Ս. Լոռու մարզի վայրի համեմունքային և ուտելի բույսերի տեսակային կազմի մոնիթորինգ ԳՊՄ-ի գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, էջ 34-39, 2008:
2. Եղոյան Ռ.Յ., Հովակիմյան Ժ.Ա. Ավելուկի կենսաբանական առանձնահատկությունները և տնտեսական նշանակությունը Լոռու մարզում, Ե., Չանգակ հրատ., 129 էջ, 2004:
3. Եղոյան Ռ.Յ., Եղոյան Տ.Վ., Հովսեփյան Տ.Ս., Սարոյան Դ.Ա. Ծանր մետաղների՝ Se, Mn, Zn-ի քանակի և որակի գաղթի ուսումնասիրությունը վայրի մոշենու տարբեր օրգաններում և ածելատեղի հողում, Ազրոգիտություն, N1-2, էջ 37-40, 2013:
4. Ղանդիյան Դ.Ա., Բարսեղյան Ա.Ս. Հայաստանի վայրի ուտելի, համեմունքային, բանջարաբույսերի գենոֆոնդը, Ե., 47 էջ, 1999:
5. Թախտաջյան Ա.Լ. և Ֆյոդորով Ա.Ա. Երևանի ֆլորա изд-во АН Арм. ССР, с. 382-406, 1945.
6. Априкян С.В. Краткая история использования полезных растений флоры Армении с древних веков до нашего времени. Флора растений и растительные ресурсы Арм. ССР. Сб. Науч. труд., вып. 8., с. 171-194, 1981.
7. Зироян А.Н. Эколого-биологическая оценка растительности Армении. Ереван, Издательский дом “Лусабац”, 353с., 2008.
8. Сагателян А.К. Особенности распределения тяжелых металлов на территории Армении, Ереван, 283 с., 2004.
9. Степанян В.Е., Галстян М.А., Азарян С.Н., Ханбян М.В., Авакян А.А. Эколого-геологические и социально-экологические основы оценки природно-техногенных негативных изменений территории Армении. Ереван, Асогик, 491с., 2011.
10. Унанян А. Накопление тяжелых металлов в полевых культурах, возделываемых в окрестностях Алавердского горно-металлургического завода “Агронаука”, Ереван, 3-4, с. 132-134, 2010.
11. Edoyan R.A., Edoyan T.V. The smog of heavy metals (Ni, Zn, Cu, Pb) in the vegetative organs, harvest and growing soil of potatoes wheat and wild blackberries Pulsed University Publishing House of Suceava, Food and environment safety year, XI, 2, p. 38-43, 2012.
12. Merian E.A. Effect of heavy metal pollution on plants, Chemosphere, 11, Issue 4, 30-31p., 1982.

Ստացվել է 26.06.2014



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(66), 2014

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԴԻՈՅԵՍՈՂԻՆԱՄԻԿԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆՆԱԿԱՆ ՍԹՐԵՍԻ ԵՎ ԱՐՈՄԱԹԵՐԱՊԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հ.Տ. ԱԲՐԱՅԱՍՅԱԼ

Երևանի պետական լսարան, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն
Ah200588@gmail.com

Ուսումնասիրվել են ուսանողների կենտրոնական հեմոդինամիկայի ցուցանիշների փոփոխությունները ընկալման սթրեսի և արոմաթերապիայի պայմաններում: Քննական սթրեսն ուղեկցվում է կարդիոհեմոդինամիկայի ցուցանիշների արտահայտված փոփոխություններով, որոնք վկայում են վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ օղակի ակտիվացման մասին: Վերջինս արտահայտվում է ստուգիչ խմբի հետազոտվողների սրտի կծկումների հաճախության, զարկերակային ճնշման բաղադրիչների համապատասխան փոփոխություններով: Նարնջի եթերային յուղի կիրառումը նպաստում է օրգանիզմի հարմարողական-փոխհատուցողական մեխանիզմների ակտիվացմանը, ինչի մասին են վկայում ընկալման փորձնական խմբի հետազոտվողների ուսումնասիրվող ցուցանիշների դիտվող առավել մեղմ փոփոխությունները կամ դրանց բացակայությունը ստուգիչ խմբի համեմատությամբ:

Արոմաթերապիա – ընկալման սթրես – զարկերակային ճնշում – սրտի կծկումների հաճախություն – հարմարողական մեխանիզմներ

Исследовались изменения показателей центральной гемодинамики студентов в условиях экзаменационного стресса и ароматерапии. Экзаменационный стресс сопровождается выраженными сдвигами показателей гемодинамики, свидетельствующими об активации симпатического звена вегетативной нервной системы. Последнее выражается соответствующими изменениями частоты сердечных сокращений и составляющих артериального давления у испытуемых контрольной группы. Использование эфирного масла апельсина перед экзаменом способствует активации адаптивно-компенсаторных механизмов организма, свидетельством чего являются менее выраженные изменения или их отсутствие у студентов экспериментальной группы по сравнению с контролем.

Ароматерапия – экзаменационный стресс – артериальное давление – частота сердечных сокращений – адаптационные механизмы

Changes of students' central hemodynamic parameters in condition of examination stress and aromatherapy were investigated. Examination stress is accompanied by expressed changes of hemodynamical parameters, which indicate the activation of the sympathetic component of VNS. The latter is expressed by the corresponding changes of heart rate and components of blood pressure of examinees of the control group. Using the orange ethereal oil before the exam contributes to the activation of adaptive-compensatory mechanisms of the organism. This is proved by less expressed or by absence of changes of the experimental group students' investigated parameters compared to the control group.

Aromatherapy – examination stress – heart rate – blood pressure – adaptive mechanisms

Ներկայիս մասնագիտական գործունեության առաջատար առանձնահատկություններից են տեղեկատվական զգալի ծանրաբեռնվածությունները, որոնք պարբերաբար ուղեկցվում են քննություններով պայմանավորված հոգեհուզական լարվածությամբ: Հարկ է նշել, որ ուսումնական գործընթացը բնութագրող գործոնների շարքում իր ազդեցության լայնամաշտաբությամբ և բացասական հետևանքներով առաջնային տեղ է զբաղեցնում քննական սթրեսը, որի հիմնական "թիրախը" համարվում են ուսանողները [3, 13]:

Քննական սթրեսը հանգեցնում է աշխատանքի, հանգստի, սնման ռեժիմի խանգարման, սակավաշարժության զարգացման, իմունիտետի թուլացման, քրոնիկական հոգնածության համախտանիշի ձևավորման, ուսման առաջադիմության անկման և ի վերջո կարող է օրգանիզմում ախտաբանական գործընթացների առաջացման պատճառ հանդիսանալ [1, 4, 5, 9, 11]: Դրա հետ կապված վերջին տարիներին ավելի մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների օրգանիզմի ֆիզիոլոգիական համակարգերի ձևաբանագործառական վիճակի ուսումնասիրությանը ԲՈՒՀ-ում սովորելու ընթացքում և հատկապես քննաշրջանում, ինչպես նաև տարբեր բնույթի բացասական գործոններին արագ և արդյունավետ արձագանքելու զարգացմանն ուղղված միջոցառումների կիրառմանը [2, 8]:

Ներկայումս հոգնածության ձևավորման կանխարգելման, նյարդային լարվածության վերացման, մտավոր և ինտելեկտուալ ունակությունների զարգացման, աշխատունակության բարձրացման, սիրտ-անոթային և օրգանիզմի այլ համակարգերի աշխատանքի կարգավորման ոչ ավանդական մեթոդների (ֆիտո-, երաժշտաթերապիա, ֆիզիկական կուլտուրա) շարքում աստիճանաբար մեծ կիրառություն է ձեռք բերում արոմաթերապիան [7]: Վերջինս նպաստում է հուզական վիճակի կայունացմանը, ակտիվացնող ազդեցություն է թողնում կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆՀ) վրա, թուլացնում ծանրաբեռնվածությունը մարդու օրգանիզմի օրգան-համակարգերի վրա, թողնում է հակասթրեսային ազդեցություն և այլն [10]:

Համընդհանուր ֆիզիոլոգիական պատկերացումների համաձայն օրգանիզմի գործառական վիճակը առավել հարմար է գնահատել ըստ սիրտ-անոթային համակարգի ցուցանիշների փոփոխությունների, քանի որ այն առավել զգայուն է տարբեր բնույթի անբարենպաստ գործոնների նկատմամբ: Ուստի տվյալ հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել ուսանողների կարդիոհեմոդինամիկայի ցուցանիշների փոփոխությունները քննական սթրեսի և արոմաթերապիայի ազդեցության պայմաններում:

Նյութ և մեթոդ: Հետազոտվել են ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում սովորող 60 ուսանողներ: Հետազոտվողները բաժանվել են երկու խմբի՝ ստուգիչ (30 ուսանող) և փորձնական (30 ուսանող): Հետազոտությունները կատարվել են երեք փորձարարական իրավիճակներում. 1. ուսումնական կիսամյակի համեմատաբար հանգիստ օր (զրանցվել է ֆիզիոլոգիական նորման), 2. քննությունից առաջ, 3. քննությունից հետո:

Փորձնական խմբի ուսանողները քննությունից առաջ 20 րոպե տևողությամբ գտնվել են փակ սենյակում, որտեղ արումալամպի միջոցով կիրառվել է նարնջի եթերային յուղի բույրը (ֆիրմա «Վիվասան», Շվեյցարիա):

Երեք փորձարարական իրավիճակներից յուրաքանչյուրում հաշվարկվել են կենտրոնական հեմոդինամիկայի հիմնական ցուցանիշները: Սիստոլային (ՍՉՃ), դիաստոլային (ԴՉՃ) զարկերակային ճնշումները և սրտի կծկումների հաճախությունը (ՍԿՀ) չափվել են «BALANCE KH 8097» մակնիշի էլեկտրոնային ճնշաչափով:

Հատուկ բանաձևերով հաշվարկվել են՝արյան սիստոլային (ՍԾ) և րոպեական ծավալները (ԱՐԾ), անոթազարկային (ԱՃ) և միջին դինամիկական ճնշումները (ՄԴՃ), արյան շրջանառության ինքնակարգավորման տիպը (ԱՇԻՏ), արյան շրջանառության հարմարողականության պոտենցիալը (ՀՊ), արյան շրջանառության արդյունավետության գործակիցը (ԱՇԱԳ):

Ստացված տվյալները եկթարկվել են վիճակագրական վերլուծության «Statistica 10» ծրագրային փաթեթի միջոցով, հավաստիությունը որոշվել է ըստ Ստյուդենտի *t* չափանիշի:

Արդյունքներ և քննարկում: Ֆիզիոլոգիական հետազոտությունների արդի փուլում ընդգծվում է սթրեսային ռեակցիաների ուսումնասիրման անհատական մոտեցման անհրաժեշտությունը, քանի որ միջին վիճակագրական տվյալների ստացման դեպքում հոգեբանական կամ ֆիզիոլոգիական ցուցանիշներով տարբերվող առանձին անհատների՝ սթրեսի նկատմամբ պատասխանի ընդհանուր պատկերը փոխվում է: Դրա հետ կապված ըստ կարգավորող համակարգերի լարվածության մակարդակի բոլոր հետազոտվողները բաժանվել են երեք խմբի՝ վագո-, նորմո- և սիմպաթոտոնիկներ:

Կարդիոհեմոդինամիկայի ցուցանիշների ուսումնասիրությունը նորմայում ցույց է տվել գրեթե հավասար մակարդակ երկու խմբերի հետազոտվողների մոտ: Ամենայն

հավանականությամբ դա պայմանավորված է նրանով, որ բոլոր հետազոտվողները գտնվում են միջավայրային և հոգեացողական միատեսակ պայմաններում, որոնցում օրգանիզմի հարմարումն առաջ է բերում վեգետատիվ ակտիվության միանման դրսևորումներ [6, 14]:

Նախաքննական շրջանում դիտվել է ՍԿՅ-ի հավաստի մեծացում հետազոտվողների բոլոր խմբերում: Ստուգիչ խմբում ՍԿՅ-ի աճը վագոտոնիկների մոտ կազմել է 33.87% ($p < 0.001$), նորմոտոնիկներինը՝ 29.29% ($p < 0.001$), իսկ սիմպաթոտոնիկներինը՝ 42.16% ($p < 0.001$), ինչը վկայում է սիմպաթիկ համակարգի ընդհանուր ակտիվացման մասին (աղ. 1): Նախաքննական շրջանում փորձնական խմբի հետազոտվողների ՍԿՅ-ի փոփոխությունները եղել են շատ ավելի թույլ արտահայտված ստուգիչ խմբի համեմատությամբ: Այսպես, վագոտոնիկների ենթախմբում ՍԿՅ-ն ավելացել է ընդամենը 7.14%-ով ($p < 0.001$), նորմոտոնիկների մոտ՝ 7.13%-ով ($p < 0.05$), իսկ սիմպաթոտոնիկներինը՝ 12.96%-ով ($p < 0.001$): Նշված փոփոխությունները ևս վկայում են հոգեհուզական լարվածության ազդեցությամբ ՎՆՅ-ի սիմպաթիկ կոնտուրի ակտիվացման մասին, որը, սակայն, եղել է շատ ավելի չափավոր ստուգիչ խմբի համեմատությամբ, ինչը պայմանավորված է նարնջի եթերային յուղի կանոնավորող ազդեցությամբ (աղ. 1):

Ստուգիչ խմբում ՍԿՅ-ի մեծացումն ուղեկցվել է զարկերակային ճնշման (ՉՃ) բոլոր բաղադրիչների աճով: Այսպես, վագոտոնիկների մոտ ՍՉՃ-ի, ԴՉՃ-ի, ԱՃ-ի և ՄԴՃ-ի աճը կազմել է 5.48% ($p < 0.05$), 3.86% ($p < 0.05$), 12.67% ($p < 0.05$), 5.82% ($p < 0.05$), նորմոտոնիկների մոտ՝ 15.07% ($p < 0.001$), 11.61% ($p < 0.001$), 6.37%, 17.24% ($p < 0.001$), սիմպաթոտոնիկների մոտ՝ 12.47% ($p < 0.001$), 4.82%, 28.84% ($p < 0.05$), 7.86% ($p < 0.01$) համապատասխանաբար (աղ. 1):

Ամենայն հավանականությամբ սթրեսային իրավիճակում ՉՃ-ի ցուցանիշների տարաբնույթ փոփոխությունների պատճառներից է սրտային արտամղման և ծայրամասային անոթային դիմադրության միջև եղած ներդաշնակության խախտումը: ՉՃ-ի բաղադրիչների բարձրացումը պայմանավորված է գլխավորապես սրտամկանի աշխատանքի ուժեղացմամբ և կարգավորող մեխանիզմների սիմպաթիկ օղակի ակտիվացմամբ, ինչը վկայում է սթրեսային իրավիճակներում օրգանիզմի փոխհատուցողական մեխանիզմների աղեկված մոբիլիզացման մասին [4]: Սթրեսային իրավիճակում զարկերակային հիպերթենզիայի ձևավորման գործընթացում գլխավոր դերը պատկանում է ադրեներգիկական մեխանիզմներին, լիմբիա-ցանցային համալիրին և ենթատեսաթմբի ու նշահամալիրի հուզածին գոտիներին [12]:

Փորձնական խմբում նախաքննական շրջանում ՉՃ-ի բաղադրիչների փոփոխությունները եղել են աննշան և բազմաբնույթ: Վագոտոնիկների խմբում ՍՉՃ-ի և ԱՃ-ի ցուցանիշները նվազել են 1.04%-ով և 5.13%-ով՝ շարունակելով տատանվել նորմայի սահմաններում, ԴՉՃ-ն ավելացել է ընդամենը 2.38%-ով, իսկ ՄԴՃ-ն գործնականորեն չի փոխվել: Նորմոտոնիկների ենթախմբում ՉՃ-ի բոլոր բաղադրիչների արժեքները նորմայի համեմատ գործնականորեն չեն փոխվել: Սիմպաթոտոնիկների ՍՉՃ-ի, ԴՉՃ-ի, ՄԴՃ-ի արժեքներն աննշան ավելացել են, իսկ ԱՃ-ն չի փոխվել (աղ. 1): Ստացված տվյալները վկայում են, որ նախաքննական շրջանում փորձնական խմբի հեմոդինամիկայի ցուցանիշները վիճակագրորեն հավաստի փոփոխությունների չեն ենթարկվել:

Արյան շրջանառության գործառական վիճակի գնահատման համար մեծ նշանակություն ունի սթրեսածին իրավիճակներում ՍԿՅ-ի և առավելագույն ՉՃ-ի փոփոխությունների զուգահեռությունը, ինչը բնութագրվում է ԱՇԱԳ-ով: Նախաքննական շրջանում սիրտ-անոթային համակարգի կարգավորման մեխանիզմներում սիմպաթիկ ազդեցությունների գերակայման մասին է վկայում նաև ԱՇԱԳ-ի փոքրացումը հետազոտվողների բոլոր խմբերում, սակայն ի տարբերություն ստուգիչ խմբի, փորձնական խմբում դրանք եղել են շատ ավելի թույլ արտահայտված (աղ. 1):

Ուսումնասիրված ցուցանիշների նման դինամիկան վկայում է եթերային յուղի օրգանիզմի սիմպաթ-ադրենալային համակարգի վրա ունեցած կայունացնող ազդեցության մասին, ինչպես նաև հարմարողական-փոխհատուցողական մեխանիզմների ակտիվացման վառ դրսևորում է:

Նախաքննական շրջանում ստուգիչ խմբի վագո- և սիմպաթոտոնիկների ենթախմբերում ՍԾ-ի արժեքները տատանվել են բնականոն մակարդակների տիրույթում, ընդ որում երկու ենթախմբերում էլ փոփոխությունները եղել են ոչ հավաստի: Փորձնական խմբի հետազոտվողների մոտ ՍԾ-ի ակնառու փոփոխություններ նույնպես չեն նկատվել (աղ. 1):

Աղյուսակ 1. Ուսանողների կարդիոհեմոդինամիկայի ցուցանիշների փոփոխությունները բնական մտահուզական լարվածության պայմաններում

	Ստուգիչ խումբ			Փորձնական խումբ			
	1	2	3	1	2	3	
վազոտոնիկներ	ՍԿՅ (գ/ր)	74.51±2.82	99.75±5.39***	78.88±3.18***	70.01±7.04	75.02±8.53***	72.25±7.65***
	ՍՁՃ (մմ ս.ս.)	111.01±2.05	117.10±3.88*	110.8±2.7*	103.08±3.14	102.01±3.22	101.53±1.57
	ՂՁՃ (մմ ս.ս.)	74.50±2.81	77.38±4.06*	75.75±2.29*	63.50±5.45	65.01±2.86	63.50±1.73
	ՍԾ (մլ)	57.53±2.43	59.01±4.59	60.54±1.56	60.14±13.41	63.34±1.36	64.69±1.96*
	ԱՐԾ (լ)	4.35±0.15	5.81±0.51**	4.77±0.21**	4.58±0.68	4.75±0.44	4.66±0.39
	ԱՃ (մմ ս.ս.)	35.51±1.75	40.01±5.22*	38.01±1.71	39.01±3.22	37.01±1.65	38.01±2.66
	ՄՂՃ (մմ ս.ս.)	90.22±2.36	95.47±3.03*	89.07±2.35*	80.17±4.31	80.91±2.91	79.84±1.01
	ՅՊ (պ.մ.)	1.99±0.08	2.38±0.81***	2.02±0.07***	1.73±0.11	1.80±0.14	1.74±0.09*
	ԱՇԻՏ (պ.մ.)	102.81±3.91	78.81±4.91**	92.98±3.76**	91.67±12.89	87.38±8.85	88.62±7.69
ԱՇԱԳ	1.49±0.21	1.17±0.31**	1.40±0.49	1.47±0.24	1.36±0.41*	1.40±0.19	
Նորմոտոնիկներ	ՍԿՅ (գ/ր)	79.44±0.95	102.71±3.30***	87.28±1.78***	77.01±3.52	82.50±3.75*	78.83±2.04**
	ՍՁՃ (մմ ս.ս.)	112.71±1.74	129.70±3.17***	118.61±3.45***	109.33±6.87	109.33±11.61	108.17±10.69
	ՂՁՃ (մմ ս.ս.)	74.22±1.84	82.83±1.65**	76.56±1.61*	68.50±5.38	69.01±8.72	68.01±8.16
	ՍԾ (մլ)	59.99±2.10	53.45±1.95*	58.85±1.46*	63.63±5.11	63.09±3.98	62.54±5.55
	ԱՐԾ (լ)	4.76±0.16	5.42±0.31*	5.16±0.19*	4.82±0.55	5.21±0.41	5.01±0.37
	ԱՃ (մմ ս.ս.)	38.44±2.37	40.89±2.95	38.67±1.37	40.83±6.07	40.33±4.58	40.17±3.49
	ՄՂՃ (մմ ս.ս.)	90.75±1.36	106.40±1.92***	93.18±1.34***	86.07±5.29	86.34±9.81	85.27±9.17
	ՅՊ (պ.մ.)	2.05±0.04	2.64±0.08***	2.19±0.04***	1.92±0.07	1.98±0.21	1.95±0.21
	ԱՇԻՏ (պ.մ.)	93.47±2.13	87.66±3.02*	88.38±2.72	90.01±10.16	84.35±9.64	86.37±11.51
ԱՇԱԳ (պ.մ.)	1.42±0.25	1.26±0.11**	1.36±0.19	1.42±0.18	1.33±0.30	1.37±0.17	
սիմպաթոտոնիկներ	ՍԿՅ (գ/ր)	80.9±1.29	115.01±7.04***	88.91±2.25***	75.60±2.67	85.40±4.79***	80.41±1.55***
	ՍՁՃ (մմ ս.ս.)	115.51±1.81	129.91±2.16***	118.01±1.77***	114.60±4.56	118.01±5.85***	115.01±4.81**
	ՂՁՃ (մմ ս.ս.)	78.81±1.56	82.61±3.47	80.50±2.65	72.61±3.91	75.81±8.34	72.81±5.49*
	ՍԾ (մլ)	56.40±1.45	60.08±4.31	57.01±1.71	62.01±4.49	60.38±6.48	63.01±4.33*
	ԱՐԾ (լ)	4.59±0.14	6.94±0.67**	5.08±0.23**	4.69±0.44	5.14±0.51**	4.98±0.19
